# 16-ԱՄՅԱ ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանցի շախմատիստներից երեւանյան համաշխարհային օլիմպիադայում բոլորից հաջող հանդես եկավ 16-ամյա Կարեն Ասրյանը, որը ելույթ էր ունենում Հայաստանի երկրորդ հավաքականում: Նա խաղացած 12 հանդիպումներում վաստակեց 10 միավոր եւ 5-րդ խաղատախտակի վրա գրավեց առաջին տեղն ու արժանացավ ոսկե մեդալի: Տոկոսային հարաբերությամբ (83,33 տոկոս) Կարեն Ասրյանի ցուցանիշն ամբողջ օլիմպիադայում ընդհանուր առմամբ երրորդն է: Նրանից ավելի բարձր արդյունք ցույց տված երկու շախմատիստները՝ ուգանդացի Ժոֆրե Մակումբին եւ Սլովակիայից Պավոլ Պչոլան, ներկայացնում էին 6-րդ խաղատախտակը եւ բնականաբար մրցել են ավելի թույլ շախմատիստների հետ: Կարեն Ասրյանը միաժամանակ գերակատարել է միջազգային վարպետի նորման եւ լրացրել գրոսմայստերի առաջին բալը: Ըստ գործող կանոնակարգի, եթե օլիմպիադայում որեւէ մեկը լրացնում է գրոսմայստերի նորման, ապա նա միանգամից արժանանում է այդ բարձր կոչմանը, սակայն պարտադիր է, որ շախմատիստն անցկացնի 13 հանդիպում: Ինչպես նշվեց, Կարենն անցկացրել է 12 հանդիպում եւ ցավալի է, որ չնայած լրացրել է գրոսմայստերի նորման, սակայն մեկ պակաս խաղի համար չի արժանանա այդ կոչմանը: Ընդհանրապես նման կանոնակարգն անտրամաբանական է: Բոլոր դեպքերում քանի որ Կարեն Ասրյանը երրորդ անգամ լրացրել է միջազգային վարպետի նորման, ուստի նա արդեն միջազգային վարպետ է: Առաջին անգամ տաղանդավոր շախմատիստը միջազգային վարպետի նորման լրացրել է այս տարվա փետրվարին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած Պետրովի հուշամրցաշարում: Հետո այն կրկնել է Հայաստանի առաջնությունում:

Այո, Կարեն Ասրյանը կարող էր դառնալ Հայաստանի բոլոր ժամանակների ամենակրտսեր գրոսմայստերը: Այնուամենայնիվ չենք կասկածում, որ շուտով նա կարժանանա այդ կոչմանը: Հիշեցնենք, որ աշխարհի ամենակրտսեր գրոսմայստերը հունգարացի Պետեր Լեկոն է, որն այդ կոչմանն արժանացել է 14 տարեկանում: Ֆիշերը գրոսմայստեր է դարձել 15 տարեկանում: Կարեն Ասրյանը օլիմպիադայում հայաստանցի մինչեւ 20 տարեկան շախմատիստների մեջ ցույց տված լավագույն արդյունքի համար նույնպես արժանացել է հատուկ մրցանակի, որը սահմանել էր Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը:



Կարեն Ասրյանը աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի մոր՝ Կլարա Կասպարովայի հետ

Մինչեւ օլիմպիադան Կարեն Ասրյանի շախմատային վառ տաղանդը դրսեւորվել էր դեռեւս Մոսկվայում տեղի ունեցած «Կրեմլյան աստղեր» մրցաշարում, որին մասնակցում էին 100 ուժեղագույն գրոսմայստերներ: Անհատական գործակցով պատանի շախմատիստն այդ մրցաշարում վերջինն էր: Նրան թույլատրել էին հանդես գալ ուժեղ կազմով այդ մրցաշարում, որպես «Կասպարովի գավաթի» հաղթող: Մոսկվայում Կարեն Ասրյանն առավելության է հասել այնպիսի անվանի գրոսմայստերների նկատմամբ, ինչպիսիք են Ալեքսանդր Բելյավսկին, Եվգենի Սվեշնիկովը, Յուրի Ռազուվաեւը, Գենադի Կուզմինը, ոչ-ոքի է խաղացել Ռաֆայել Վահանյանի, Բորիս Գուլկոյի, Իգոր Նովիկովի եւ Վլադիմիր Եպիշինի հետ: Վերջին երկու տուրերում պարտությունները գրոսմայստերներ Կոնստանտին Սակաեւից եւ Իլյա Սմիրինից հնարավորություն չտվեցին նրան, որպեսզի շախմատային պատկառելի շրջապատում գրավի բարձր տեղ: Ավելորդ չէ նշել, որ երեւանյան օլիմպիադայում Կարեն Ասրյանը անցկացրած իր 12 հանդիպումներից 9-ում խաղացել է սեւ ֆիգուրներով, իսկ վերջին 7 պարտիաներում նույնպես սեւ ֆիգուրներով վաստակել է 6,5 միավոր:

### ԴՅՈՒՐԽԱՈՒՍ–ԱՍՐՅԱՆ

**Նորվեգիա Հայաստան-2**

**Կարո-Կանի պաշտպանություն**

***(մեկնաբանությունները Կարեն Ասրյանի)***

1. e4 c6 2. d4 d5 3. ed cd 4. c4 ♘f6 5. ♘c3 e6 6. ♘f3 ♗e7

Կիրառվում է նաեւ 6. ... ♗b4 քայլը:

7. cd ♘d5 8. ♗d3 ♘c6 9. 0-0 0-0 10. ♖e1 ♗f6 11. ♗e4 ♘ce7

Խաղարկվել է Պանովի գրոհի տարբերակի վերջերս մեծ տարածում գտած ճյուղավորումներից մեկը:

12. ♕d3 h6!?

Հայաստանի 1996 թ. բարձրագույն խմբի առաջնության Խաչիյան–Ասրյան պարտիայում խաղացվել է 12. ... g6 13. ♘e5 b6 սպիտակների մի փոքր առավելությամբ:

13. ♘e5 ♘c6 14. ♗d5 ♘b4! 15. ♕g3 ♗h4 16. ♕f3 ♘d5

16. ... ♘d5 շարունակությունը ավելի ուժեղ է, քան 16. ... ed քայլը, որը հանդիպել է Սմիսլով-Իվանչուկ, Մոսկվա, 1988 թ. պարտիայում:

17. ♘d5 ed 18. ♘d3?! ♕f6! 19. ♕f6

Եթե 19. ♕d5, ապա 19. .. ♖d8:

19. ♕f6 ♗f6 20. ♗e3 ♗e6 21. ♖ac1 ♖ac8 22. ♘f4 g5 23. ♘e6 fe 24. ♔f1?!

Ճիշտ էր 24. g4 քայլը:

24. ... h5

Թույլ չտալով սպիտակներին խաղալ g4

25. ♔e2 ♔f7 26. ♔d3 g4 27. g3 ♖h8 28. ♖f1 ♔g6 29. ♖c8 ♖c8 30. f3 ♖h8 31. ♗f4 ♖c8 32. b3 ♗e7 33. ♗e5 ♗g5 34. fg hg 35. a4 b6 36. ♗d6 a6 37. ♖e1 ♖c6! 38. ♗b4

Պարտության էր տանում 38. ♖e6 ♗f6 39. b4 b5 հետագա 40. ... ♔f7 շարունակությունը:

38. ... b5 39. ♗c3 ba 40. ba ♗d8 41. ♖f1 ♖c4 42. ♖f8

Ավելի ճիշտ էր 42. ♖f4 քայլը:

42. ... ♗e7 43. ♖g8 ♔f7! 44. ♖g4



44. ... e5!!

Այս ուժեղ քայլից հետո սպիտակների նավակը դուրս է մնում խաղից:

45. h3 e4+ 46. ♔d2 ♖a4 47. ♔c2? ♖a2 48. ♔d1 ♖f2 49. h4 ♗f6 50. ♔e1 ♖f5! 51. ♔e2 ♗d8! 52. ♗d2 a5 53. h5 ♖h5 54. ♖f4 ♔e8! 55. ♖g4 a4 56. ♖g8 ♔d7 57. ♖g7 ♔c6 58. g4 ♖h2 59. ♔d1 ♗b6 60. ♖g6 ♔b5 61. ♖d6 ♗d4 62. ♖d5 ♔c4 63. ♖a5 ♖d2!, սպիտակները հանձնվեցին: